

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____» _____ 2025թ.

N _____ Ն

ՈՐՈՇՈՒՄ

ՀԵԹՈՒՄՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանում գտնվող Տիտոգրադյան փողոցն (սկսվում է Այվազովսկու փողոցից հասնում Խաղաղ Դոնի փողոց) անվանափոխել Հեթումյաններ անվամբ՝ «Հեթումյանների փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Ազգային առաջընթաց»
խմբակցության անդամ**

Հայկ Գրիգորյան

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԵԹՈՒՄՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տիտոգրադ անունով քաղաք այլևս չկա: Տիտոգրադը նախկին Չեռնոգորիայի մայրաքաղաքն էր՝ Հարավսլավիայի բռնապետ Իոսիպ Բրոզ Տիտոյի անունով:

Մոնտենեգրոյի (նախկին Չեռնոգորիա) մայրաքաղաքը այժմ կոչվում է Պոդգորիցա (նախկին Տիտոգրադ):

Հեթումյանները մինչև թագավորական տոհմ լինելը իշխանական տոհմ էին: Հեթումյաններ իշխանական տոհմի հիմնադիրը՝ Հեթումի որդի Օշին Գանձակեցին, խույս տալով սելջուկյան թուրքերի հալածանքներից, 1073 թվականին իր ազգատոհմով Կիլիկիա է տեղափոխվում Մեծ Հայքի Արցախ նահանգի Մայրյաց ջուրք ավանից (Հյուսիսային Արցախ), հիմք դնելով Հեթումյանների իշխանական տոհմին: Կիլիկիայում իշխող Աբլղարիբ Արծրունին իր ընկեր Օշինին է նվիրում Տավրոսի լեռներում գտնվող՝ արաքներից գրավված Լամբրոն բերդը (հայկական անառիկ բերդ և քաղաք Լեռնային Կիլիկիայում): Օշինը հիմնովին վերակառուցում է անառիկ բերդը և կնության առնում Աբլղարիբ Արծրունու դստերը, որտեղ էլ հաջորդաբար իշխում են նրա իրավահաջորդները, կրելով Լամբրոնի իշխան տիտղոսը: Հեթումյանների իշխանական տոհմին է պատկանում նաև Պապեռոն ամրոցը, որտեղ էլ հաստատվում են Օշին Գանձակեցու երկու եղբայրները՝ Բազունին և Ալգամը, կրելով Պապերոնի իշխան տիտղոսը:

Ռուբինյանց ու Արշակունյաց արաքայատոհմերի անվանումներով կան փողոցներ ու պողոտա, իսկ Հեթումյաններ չկա:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 16-րդ կետն առաջարկվում է Էրեբունի վարչական շրջաններում գտնվող Տիտոգրադյան փողոցն անվանափոխել Հեթումյաններ անվամբ՝ «Հեթումյանների փողոց»:

Հաշվի առնելով վերոգրյալը և, ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

**«Ազգային առաջընթաց»
խմբակցության անդամ**

Հայկ Գրիգորյան